ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2012-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Սյունիքի մարզում դիտվում է մեկ տարեկան երեխաների ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների նվազում:



Գծապատկեր 1՝ 2012-2019թթ. կանխարգելիչ պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշները Սյունիքի մարզում, %

Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Սյունիքի մարզում 2019 թվականին 2018 թվականի համեմատությամբ դիտվել է ցուցանիշների նվազում: 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 1,1%-ով և կազմել է 87,5%, 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 1,9%-ով՝ կազմելով 90,3%, իսկ 6 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 0,1%-ով՝ կազմելով 96,2%: 2019 թվականին 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ է արձանագրվել «Գորիսի ԲԿ» ՓԲԸ-ում (68,7%), «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում (77,2%), «Վերիշենի ԲԱ» ՊՈԱԿ-ում (77,8%), «Մեղրու

տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում (80,6%) և «Նորաշենիկի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ում (83,3%), (Աղյուսակ 1):

Առողջապահության նախարարությունում ցուցանիշների բարելավման նպատակով կազմակերպված քննարկումից հետո մարզում 2019թ. դեկտեմբերին դիտվել է ցուցանիշների որոշակի բարելավում օգոստոս ամսվա համեմատությամբ, մասնավորապես 1 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 0,1%-ով և կազմել 87,5%, 2 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 0,1%-ով և կազմել 90,3%:

Հանրապետության ողջ տարածքում հատկապես ցածր է մեծահասակ ազգաբնակչության ԱԴՓ-Մ պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշները՝ 33,8%, իսկ Սյունիքիք մարզում՝ 8,5% :

Ստորև ներկայացվում է պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի:



Գծապատկեր 2՝ 2019թ. Սյունիքի մարզում կանխարգելիչ պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի